ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի բյուջեի ձևավորումը

Հանձնաժողովի 2017 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.7 գործակցով: Օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման և կարողությունների զարգացման, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրերի իրականացման և այլ ֆոնդերին:

Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների պահպանում	
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	**788 549.6**
Աշխատանքի վարձատրություն	640 812.3
Ծառայությունների եվ ապրանքների ձեռքբերում, դրամաշնորհներ, սոցիալական նպաստներ եվ կենսաթոշակներ, հարկեր, պարտադիր վճարներ	147 737.3
Գործադիր իշխանության, պետական կառավարման հանրապետական եվ տարածքային կառավարման մարմինների կարողությունների զարգացում	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր այդ թվում՝ հիմնական միջոցներ	**2 451.5**
Ընդամենը ծախսեր	**791 001.1**